ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

ԲԱՆԱԿԻ

ԿԵՐՊԱՓՈԽՄԱՆ

(ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I. Մշակող մարմինը **3**

II. Հայեցակարգի գործողության ժամկետը **3**

III.Ներածություն **3**

IV. Հայեցակարգի նպատակը **4**

V. Փոփոխությունների հիմնական ելակետերը **5**

VI. Փոփոխությունների հիմնական թիրախները **6**

VII. Նպատակին հասնելու հիմնական բաղադրիչները **7**

VIII. Անցում արհեստավարժ բանակի **9**

IX.Զինված ուժերի կազմակերպական և հաստիքային կառուցվածքի բարելավում **13**

X. Վարձատրության համակարգ **14**

XI. Տարածքային պաշտպանության համակարգ **16**

XII. Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մեխանիզմների կատարելագործում **18**

1) Ակտիվ պահեստազորի պատրաստման ծրագրեր 18

2) Պետական սահմանի պահպանության համակարգի կատարելագործում 19

XIII. Ռազմական կրթության և գիտության զարգացում. **20**

XIV.Զինված ուժերի բարոյահոգեբանական պատրաստության մակարդակի բարձրացում **21**

XV. Զինծառայողների և նրանց ընտանիքների սոցիալական պաշտպանության, զինվորական ծառայության գրավչության բարձրացում **23**

3) Զինծառայողների նյութական և սոցիալական ապահովման երաշխիքներ 23

4) Զինծառայության գրավչության և զինծառայողի հեղինակության բարձրացման մեխանիզմներ 25

XVI. Առողջ և հավասարակշիռ ռազմաքաղաքացիական հարաբերությունների ձևավորում, մարդու իրավունքների պաշտպանության կատարելագործում **26**

5) Ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողությունը 26

6) Զինված ուժերում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունը 28

XVII. Զինված ուժերի կարգապահության մակարդակի բարելավում. **28**

XVIII. Հայեցակարգի՝ հրապարակման ոչ ենթակա բաղադրիչների տեսլականը **29**

XIX. Եզրափակիչ դրույթներ **31**

I. Մշակող մարմինը

Հայաստանի Հանրապետության Բանակի կերպափոխման հայեցակարգը (այսուհետ՝ Հայեցակարգ) մշակվել է ՀՀ պաշտպանության նախարարության կողմից:

II. Հայեցակարգի գործողության ժամկետը

Հայեցակարգի գործողության ժամկետն է 2024-2035 թվականները:

III. Ներածություն

Ժամանակակից աշխարհաքաղաքական գլոբալ զարգացումները, Հարավային Կովկասում ձևավորված նոր ռազմաքաղաքական իրավիճակը և Հայաստանի Հանրապետության անվտանգային ներկայիս իրադրությունը Հայաստանի Հանրապետության շուրջ ձևավորել են անմիջական և հավանական սպառնալիքներ, որոնց չեզոքացումը սկզբունքային նոր մոտեցումներ ու ռեսուրսներ է պահանջում: Միաժամանակ, վերջին տարիներին տարածաշրջանում և միջազգային ասպարեզում տեղի ունեցող ռազմական հակամարտությունները, ընթացող պատերազմները, դրանց ընթացքում կիրառվող ռազմական գիտության և տեխնիկայի նվաճումները ի ցույց են դնում ապագային միտված պատերազմի վարման նոր գործիքներ, ինչը պահանջում է վերանայել ռազմական անվտանգության ապահովման սկզբունքները և բանակաշինության ողջ տրամաբանությունը, ներառյալ՝ ռեսուրսների պլանավորումը, ռազմական գործողությունների սպասվող բնույթի ընկալումները, օպերատիվ արվեստը, մարտավարությունը և ուժերի պատրաստությունը:

Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կազմավորման սկզբից ևեթ նախկին խորհրդային կանոնադրությունների և ռազմարվեստի որդեգրումն ու տասնամյակների ընթացքում այդ մոտեցումների կիրառումը հետին պլան են մղել Հայաստանում սեփական ռազմական գիտությունը, արվեստը, մշակույթը զարգացնելու անհրաժեշտությունը: Տարածաշրջանում վերջին տարիներին տեղի ունեցած ակտիվ ռազմական գործողությունների արդյունքները և դրանց հաջորդած զարգացումները վկայում են, որ Հայաստանի Հանրապետության զինված ուժերի՝ նախկին խորհրդային չափորոշիչների հիման վրա հետագա զարգացման և Հայաստանի Հանրապետության պաշտպանության կազմակերպման գործում դրանց ադապտացման առավելագույն հնարավորությունները սպառվել են: Կարելի է վստահաբար եզրակացնել, որ ռազմական պլանավորման և պատերազմավարման ներկայումս գործող ձևերի և եղանակների հետագա կիրառման դեպքում Հայաստանի Հանրապետության զինված ուժերը տեսանելի

հեռանկարում չեն կարողանա ապահովել իրենց առջև դրված խնդիրների կատարումը, ուստի անհրաժեշտ է արմատապես վերանայել զինված ուժերի և դրանց հետագա զարգացման վերաբերյալ մոտեցումները:

Տարածաշրջանի նոր անվտանգային բազմաշերտ և բարդ միջավայրում Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության, սահմանների անձեռնմխելիության և անվտանգության պահպանումը հնարավոր կլինի միայն առաջանցիկ ռազմավարությամբ և ժամանակակից սպառազինությամբ համալրված, դինամիկ զարգացող, բարձր մարտունակությամբ արհեստավարժ բանակի առկայության դեպքում:

Սույն հայեցակարգի շրջանակներում անդրադարձ է կատարվելու Բանակի նոր թափ առած բարեփոխումներին, դրանց շարունակությանը, ինչպես նաև վեր են հանվելու առկա խնդիրներն ու ներկայացվելու են ծրագրեր, միջոցառումներ, գործողություններ՝ զինված ուժերի առջև ծառացած խնդիրները համապարփակ կերպով լուծելու նպատակով:

IV. <u>Հայեցակարգի նպատակը</u>

Հայեցակարգի նպատակն է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի պրոֆեսիոնալիզացման, այդ նպատակով արմատական համակարգային բարեփոխումների իրականացման հիմնական ուղենիշների սահմանումը, որոնք հիմք կհանդիսանան Զինված ուժերի կառուցվածքային ու բովանդակային կերպափոխման ու կիրառման, ղեկավարման ու կառավարման համակարգերի զարգացման, նոր սերնդի սպառազինության ու ռազմական տեխնիկայի համալրման, ազգային գիտատեխնիկական ներուժի ստեղծման և արդյունավետ օգտագործման, զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի գործընթացների վերանայման, զինծառայության գրավչության, զինծառայողների կրթական, կարգապահության և սոցիալական ապահովվածության մակարդակների բարձրացման համար:

Հայեցակարգը հանդիսանում է ռազմավարական բնույթի ուղեցույց փաստաթուղթ՝ ապահովելով երկարաժամկետ ուղենիշներ միջնաժամկետ և կարճաժամկետ ծրագրային փաստաթղթերի մշակման համար: Այն հիմնված է ՀՀ կառավարության 2021-2026թթ. գործունեության ծրագրի վրա:

Հայեցակարգի դրույթներն ապահովող միջոցառումները, դրանց որակական, քանակական, ֆինանսական ցուցանիշներն ու ակնկալվող արդյունքներն ընդգրկված են յուրաքանչյուր տարի ճշգրտվող «Հայաստանի Հանրապետության զինված ուժերի զարգացման պլանում» և «ՀՀ սպառազինության և ռազմական տեխնիկայի զարգացման պետական ծրագրում», որոնք հրապարակման ենթակա չեն:

Հայեցակարգը ենթադրում է ոլորտային առանձին ծրագրերի և ռազմավարությունների մշակում:

V. <u>Փոփոխությունների հիմնական ելակետերը</u>

Առանց առկա վիճակի համարժեք գնահատման, խնդիրների ու դրանց պատճառների բացահայտման հնարավոր չէ բարելավել համակարգը:

Հետևաբար, նախ պետք է՝

- կոնկրետացնել փոփոխությունից սպասումները՝ **թիրախը ոչ թե գործընթացն է, այլ վերջնարդյունքը**:
- արձանագրել ելակետերը:

Դրանք են՝

1) **Ելակետ 1.** Ոլորտի զարգացմանն ուղղված փոփոխությունը բազմաբաղադրիչ, բազմաքայլ և պարբերական գործընթաց է՝ սխալներն ու հաճախակի վերանայումներն անխուսափելի են: Սպասումները, այդ թվում՝ ժամկետների մասով, պետք է լինեն ողջամիտ ու հիմնվեն առկա իրողությունների վրա:

2) **Ելակետ 2:** Փոփոխությունների գործընթացի համարժեքությունը մեծապես պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

- առկա իրավիճակի, ներառյալ խնդիրների անկողմնակալ ախտորոշում,
- ակնկալվող վերջնարդյունքի չափելիություն և համարժեքություն,
- փոփոխությունների գործընթացի հստակություն, դրանց կատարողների իրավասության և պատասխանատվության հավասարակշռում,
- սպառիչ իրավական հիմքերի առկայության ապահովում,
- հաշվետվողականության, հսկողության և պատասխանատվության համակարգերի երաշխավորում, ներառյալ հայեցողական որոշումների կայացման գործընթացում:

3) **Ելակետ 3:** Միջոցների խնայողության նպատակադրման ընկալումից անցում ռեսուրսների դիմաց առավելագույն արդյունք ստանալու նպատակադրմանը: Այսինքն՝ օրակարգայինը ոչ թե միջոցների խնայողությունն է, այլ՝ պատասխանատվության և ռեսուրսների համախմբումը, արդյունքի վրա հիմնված փոփոխությունների կառավարումը:

4) **Ելակետ 4:** Որևէ փոփոխության հարմարեցումը պահի կոնյուկտուրային կամ անձերին՝ որպես վերջնարդյունք, անխուսափելիորեն կհանգեցնի նախանշված ծրագրերի ձախողմանը:

VI. Փոփոխությունների հիմնական թիրախները

Բանակաշինության գործընթացի և Բանակի կերպափոխման հիմնական խնդիրը վերջին շրջանում առաջացած ռազմական սպառնալիքներին դիմադարձելու համարժեք պատրաստականության ապահովումն է: Չնայած խնդիրները տարբեր են ու բազմաբնույթ, այդուհանդերձ, պետք է արձանագրել, որ ինստիտուցիոնալ առումով, առկա հիմնախնդիրների հիմնական հասցեատերը Զինված ուժերն են:

Այս առումով Բանակի կերպափոխման հիմնական թիրախներն են հանդիսանում.

- Զինված ուժերի ղեկավարման ու կառավարման, կազմկառուցվածքի, պատերազմավարման ձևերի ու եղանակների, օպերատիվ արվեստի, սպառազինության և ռազմական տեխնիկայի, մարտական պատրաստության և պատրաստականության համապատասխանեցումը երկրի առջև ծառացած սպառնալիքների բնույթին,
- պաշտպանության (ռազմավարական) պլանավորման կարողությունները բավարար մակարդակի հասցնելը,
- սեփական ռազմական գիտությունը զարգացնելու բավարար ներուժի ապահովումը, բանակաշինության կազմակերպումը հիմնավոր գիտական և մեթոդական հենքի վրա,
- զինծառայողների բարոյահոգեբանական պատրաստվածության համարժեքության ապահովումը զինվորական ծառայության և մարտական խնդիրների կատարմանը,
- զինծառայողների կրթական, մասնագիտական գիտելիքների և կիրառական հմտությունների, ֆիզիկական պատրաստվածության բարձր մակարդակի ապահովումը և համապատասխանեցումը ժամանակակից ռազմական գիտության, կրթության և պատրաստության պահանջներին,
- զինվորական ծառայության գրավչության անհրաժեշտ մակարդակի ապահովումը,
- ռազմավարական, օպերատիվ և մարտավարական օղակներում հրամանատարական պատրաստության և հրամանատարական գործառույթների իրականացման չափորոշիչների, ղեկավարման ու կառավարման սկզբունքների համապատասխանեցումը ժամանակակից պահանջներին,
- պրոֆեսիոնալ կրտսեր հրամանատարական՝ սերժանտական կազմի լիարժեք կայացումը,
- զորահավաքային և զորակոչային համակարգի արդյունավետության, պատրաստության և համալրման անհրաժեշտ մակարդակի ապահովումը,

- բոլոր տեսակի ռեսուրսների պլանավորման և կառավարման արդյունավետության ապահովումը, այդ գործընթացների թվայնացումը, բոլոր տեսակի հրամանատարական և/կամ ղեկավար պաշտոններ զբաղեցնող, ինչպես նաև նրանց հետ անմիջականորեն փոխկապակցված անձանց կողմից հայտարարագրերի պարտադիր ներկայացումը՝ այդ թվում նաև կոռուպցիոն ռիսկերը կտրուկ նվազեցնելու նպատակով,
- սպառազինության և ռազմական տեխնիկայի կազմի և քանակի համարժեքության ապահովումը ռազմական խնդիրների կատարմանը,
- տեղեկատվական անվտանգության և կիբեռանվտանգության ապահովումը:

VII. Նպատակին հասնելու հիմնական բաղադրիչները

Հաշվի առնելով առկա անվտանգային իրողությունները և դրանց զարգացման միտումները, ինչպես նաև Զինված ուժերի վերոնշյալ խնդիրների լուծման անհրաժեշտությունը, տեսանելի հեռանկարում Հայաստանի Հանրապետության հուսալի պաշտպանության ապահովման ուղին լիովին նոր, ժամանակակից չափորոշիչների ներդրմամբ արհեստավարժ Բանակի ստեղծումն է: Այդ նպատակով 2022թ. մեկնարկել է Զինված ուժերի արմատական համակարգային բարեփոխումների գործընթաց, որի մի շարք բաղադրիչներ արդեն իսկ հասանելի են ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ միջազգային հանրության համար: Զինված ուժերի արմատական համակարգային բարեփոխումների, դրա առանձին բաղադրիչների հետագա ընթացքը գիտակրթական և նյութատեխնիկական զգալի ռեսուրսներից զատ, նաև քաղաքական կամք և հասարակական լայն աջակցություն է պահանջում:

Սույն Հայեցակարգը, որպես Բանակի կերպափոխման՝ հանրայնացման ենթակա գործընթաց, ներկայացնում է հետևյալ բաղադրիչների բովանդակային նկարագրությունը՝

1) Անցում արհեստավարժ բանակի,
2) Զինված ուժերի (այսուհետ նաև՝ ՀՀ ԶՈՒ, ԶՈՒ) կազմակերպական և հաստիքային կառուցվածքի բարելավում,
3) Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մեխանիզմների կատարելագործում,
4) Պրոֆեսիոնալ սերժանտական համակարգի ներդրում,
5) Ռազմական կրթության և գիտության զարգացում,
6) Զորահավաքային ռեսուրսի կառավարում և մարտունակության ապահովում,
7) Զինված ուժերի բարոյահոգեբանական պատրաստության մակարդակի բարձրացում,

8) Զինծառայողների և նրանց ընտանիքների սոցիալական պաշտպանության բարձրացում,

9) Առողջ և հավասարակշիռ ռազմաքաղաքացիական հարաբերությունների ձևավորում, մարդու իրավունքների պաշտպանության կատարելագործում,

10) Զինված ուժերի կարգապահության մակարդակի բարելավում,

11) Ռազմական և կազմակերպչական մշակույթի բարելավում,

12) ՊՆ ոլորտի ղեկավարման և վարչարարության կատարելագործում,

13) Վարձատրության համակարգի բարելավում,

14) Անձնակազմի կառավարման համակարգի բարելավում,

15) Պաշտպանության ոլորտում քաղաքականությունների, ռազմավարությունների մշակման և պլանավորման համար անհրաժեշտ մտավոր ներուժի զարգացում:

Որպես Բանակի կերպափոխման հանրայնացման ոչ ենթակա գործընթաց, ՀՀ կառավարության կողմից առանձին փակ որոշմամբ կսահմանվի հետևյալ բաղադրիչների բովանդակային նկարագրությունը.

1) Զինված ուժերի ղեկավարման և կառավարման համակարգի արդյունավետության բարձրացում,

2) պատերազմավարման ձևերի ու եղանակների (ռազմավարական, օպերատիվ և մարտավարական օղակներում), սպառազինության և ռազմական տեխնիկայի, պատրաստության (մարտական, օպերատիվ, զորահավաքային) և պատրաստականության վերանայում,

3) ռազմական պլանավորման նոր սկզբունքների որդեգրում,

4) հրամանատարական պատրաստության և ղեկավարման ու կառավարման նոր սկզբունքների ներդրում,

5) հայրենական ռազմական գիտության զարգացում,

6) զորաշարժային մարտական գործողություններ վարելու ունակ կազմավորումների ձևավորում,

7) տեղեկատվական օպերացիաների, տեղեկատվական անվտանգության և կիբեռանվտանգության ոլորտի բարեփոխումներ,

8) ռազմավարական նշանակության օբյեկտների ու ենթակառուցվածքների անվտանգության մակարդակի բարձրացում:

VIII. Անցում արհեստավարժ բանակի

Արհեստավարժ բանակի բնութագրիչն առաջին հերթին վերաբերվում է զինծառայողին: Անցումն արհեստավարժ բանակի՝ անկախ զինվորական ծառայության ներգրավման ձևից, ենթադրում է զինծառայողների համարժեք բարոյահոգեբանական, մասնագիտական և ֆիզիկական կարողությունների (հատկանիշների), ստորաբաժանումների կազմով ներդաշնակվածության առկայություն և դրանց անընդհատ կատարելագործում: Անգամ շարքային և հրամանատարական կազմի լիարժեք անցումը պայմանագրային զինծառայության ինքնաբերաբար չի հանգեցնի արհեստավարժ բանակի ստեղծման, քանի դեռ երաշխավորված չէ համարժեք պատրաստության մակարդակ, կարողությունների և անհրաժեշտ սպառազինության առկայություն: Արհեստավարժ բանակի անցման ելակետը զինծառայողների կարողությունների (հատկանիշների) համարժեքությունն է, անկախ ծառայության ձևից, հետևաբար միայն պայմանագրային ծառայությունը չպետք է նույնականացնել արհեստավարժ ծառայության հետ: Ներկայումս, բացի պարտադիր ժամկետային զինծառայողներից, Զինված ուժերի մնացած անձնակազմը զինվորական ծառայության է ներգրավված պայմանագրային հիմունքներով, ինչն ամենևին չի նշանակում, որ այդ մասով ապահովված է արհեստավարժության անհրաժեշտ մակարդակ:

Զինվորական ծառայության համար անհրաժեշտ է, որպեսզի անձն ունենա, անկախ նրանից, թե գտնվում է արդյոք նա իսկական զինվորական ծառայության մեջ, թե պահեստազորում, ակտիվ ռազմական գործողությունների պայմաններին համապատասխանող կարողություններ, դրա համար զինվորական պատրաստությունը պարտադիր է զորակոչման ենթակա ցանկացած քաղաքացու համար: Սա նշանակում է, որ զորակոչման ենթակա ցանկացած քաղաքացի պետք է անցնի պարտադիր զինվորական պատրաստություն, անկախ նրանից՝ տվյալ անձը կշարունակի ծառայությունը զինված ուժերում, թե կներառվի զորակոչային ռեզերվում: Միաժամանակ, ցանկացած սպա և արհեստավարժ սերժանտ, անկախ նրանից, ունի արդյոք բարձրագույն քաղաքացիական կրթություն, թե՝ ոչ, կարիերայի այս կամ այն փուլում պետք է ստանա նաև արհեստավարժ զինվորական կրթություն, ընդ որում.

- շարքային կազմի համար պարտադիր պատրաստության ժամկետը կազմում է 6 ամիս, որից 4,5 ամիսը տեսական, 1,5 ամիսը՝ գործնական պատրաստության համար,

- սպայական կազմի համար՝ ի լրումն արհեստավարժ զինվորական կրթության՝ նաև պարտադիր բարձրագույն կրթություն,

- պահեստազորում հաշվառված անձանց համար հավելյալ նախատեսվում է նաև պահեստազորի ուսումնական հավաքների ընթացքում իրականացվող պատրաստություն՝ համապատասխան պարբերականությամբ և փուլերով:

1. Զինծառայության ժամկետների կրճատում՝ ի հաշիվ պայմանագրային ծառայության աճի:

Պայմանագրային զինվորական ծառայությունը արհեստավարժության ապահովման առումով ենթադրում է առավել նպաստավոր նախադրյալներ, քան պարտադիր զինվորական ծառայությունը, այն վարձատրվում է, շուրջօրյա չէ, գործում են սոցիալական ապահովության և շահադրդման առավել բարենպաստ պայմաններ: Ուստի պայմանագրային զինվորական ծառայողների արհեստավարժության աստիճանի բարձրացմանը զուգահեռ, մեկնարկել է պարտադիր զինվորական ծառայությունից պայմանագրային ծառայության անցման մեխանիզմը, որն ապահովվում է հիմնականում «Պաշտպան հայրենյաց» ծրագրի միջոցով: Այդ անցումը նախատեսվում է իրականացնել զինված ուժերի զարգացման տեսլականին զուգահեռ, փուլային եղանակով, պարտադիր զինվորական ծառայության ժամկետի կրճատմանը զուգահեռ՝ մինչև 2027 թվականը:

2. Զինվորական ծառայության շահադրդման նյութական և բարոյահոգեբանական մեխանիզմների խթանում:

Կամայական շահադրդմամբ՝ զինվորական ծառայության նյութական և/կամ բարոյահոգեբանական խթանումը գործունակ չէ, քանզի զինվորական ծառայության անցնելու հիմնաքարը՝ պետության ու ինքնիշխանության՝ որպես բարձրագույն արժեքների, լիարժեք ընկալումն է: Միևնույն ժամանակ, առանց զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների արժանապատիվ կենցաղավարման պայմանների, առողջ և կայուն բարոյահոգեբանական վիճակի ապահովման, ինչպես նաև պատրաստվածության բավարար մակարդակի գործնականում հնարավոր չէ ակնկալել արհեստավարժ բանակի առկայությունը: Այդ իսկ պատճառով զինվորական ծառայության շահադրդման մեխանիզմները, ինչպիսիք են զինծառայողների ատեստավորման գործընթացը, կրթական, սոցիալական և այլ արտոնությունները կրում են համալիր փոխկապակցված բնույթ և նպատակադրված են արհեստավարժ բանակի ձևավորմանը:

3. Զինված ուժերում կանանց ներգրավվածության խթանում:

Զինված ուժերում կանանց ներգրավվածությունը հիմնականում ունի հետևյալ դրսևորումները.

1) Ուղղակի՝ պայմանագրային ընդհանուր կարգով, տղամարդկանց հետ հավասար պայմաններով:

Անհրաժեշտ են գործուն մեխանիզմներ, որպեսզի զինված ուժերում կանայք, բացի վարչարարական (գործավարական) աշխատանքից, նշանակվեն նաև մարտական խնդիրների կատարման, պլանավորման կամ վերահսկման գործառույթներ ունեցող, այդ թվում՝ հրամանատարական պաշտոններում: Ներկայումս կանայք ստացել են հնարավորություն կամավոր զորակոչվել պարտադիր զինվորական ծառայության 6 ամիս ժամկետով, «Պաշտպան հայրենյաց» ծրագրի շրջանակներում՝ 6 ամիս պատրաստություն անցնելուց հետո անցնելով 5-ամյա պայմանագրային զինվորական ծառայության, ինչպես նաև պայմանագրի ժամկետը լրանալու կամ առողջական վիճակի պատճառով ոչ պիտանի ճանաչվելու հիմքով ծառայությունից ժամկետից շուտ արձակելիս 5 մլն. դրամի չափով պատվովճար ստանալու իրավունք:

Պայմանագրային կին զինծառայողների համար հասանելի կլինի պայմանագրային արական սեռի զինծառայողների համար օրենքով սահմանված դրամական ապահովության և սոցիալական երաշխիքների ողջ համակարգը, իսկ ծառայության պայմանները հնարավորինս կհարմարեցվեն նրանց ֆիզիոլոգիական առանձնահատկություններին, հատկապես՝ կենցաղավարման մասով:

Խրախուսվելու է նաև ռազմական դրության ժամանակ աշխարհազորին և խաղաղ պայմաններում վարժական վարժանքներին կանանց պարտադիր մասնակցությունը: Աշխարհազորի շրջանակում զորակոչման համար առաջադրվող պայմաններին համապատասխող բոլոր կին քաղաքացիների համար պարբերաբար կկազմակերպվեն պարտադիր վարժանքներ, ըստ գործառութային (մասնագիտական) ուղղությունների:

2) Անուղղակի՝ կնոջ դերակատարումը զինծառայող ամուսնու և/կամ ժառանգի, պետության և զինվորական ծառայության նկատմամբ համարժեք վերաբերմունքի ձևավորման ու ժառանգների դաստիարակության գործում:

Հաշվի առնելով ընտանիքում բարոյահոգեբանական վիճակի ձևավորման գործում կնոջ կարևոր դերակատարումը, մասնավորապես՝ ժառանգների դաստիարակության գործում, հասարակության լայն շերտերի, հատկապես կանանց շրջանում, ինտենսիվ ձևով կիրականացվեն քարոզչական և կրթական միջոցառումներ՝ ողջ հասարակության ռազմահայրենասիրական ոգու արմատավորման և շարունակական ուժեղացման ուղղությամբ: Արդյունքում՝ նյութական բարեկեցության հնարավորությունից զատ, հասարակական ընկալման մեջ Զինված ուժերում ծառայությունը պետք է համարվի պատվաբեր գործ, իսկ տարբեր սուբյեկտիվ պատճառներով ծառայությունից խուսափելը

պետք է ոչ միայն պատժվի՝ օրենքով սահմանված կարգով, այլև հանրայնորեն պախարակվի:

4. Արհեստավարժ սերժանտական համակարգի ներդրում:

Զինված ուժերը պետք է առաջնորդվեն «Սերժանտական կորպուսը բանակի ողնաշարն է» կարգախոսով, և սերժանտների զորագրումը, կրթությունը, վարժանքը, կարիերայի կառավարումը ու բանակի շարքերում նրանց երկարակեցության ապահովումը հանդիսանա զինված ուժերի արդյունավետ գործունեության ռազմավարության կարևոր բաղադրամաս: Արհեստավարժ սերժանտական համակարգի ներդրումն ուղղակիորեն կնպաստի Զինված ուժերում «Առաջադրանքային ղեկավարում» հայեցակարգի (Հրամանատրում առաջադրանքի միջոցով) կայացմանը՝ ապահովելու ընդհանուր մտահղացման շրջանակներում ստորաբաժանումների ինքնավարությունը՝ հատկապես կապի կամ ղեկավարման ու կառավարման համակարգի խաթարման պայմաններում: Արհեստավարժ սերժանտական համակարգի ներդրմամբ կամրապնդվի ստորին հրամանատարական օղակների ղեկավարման շարունակականությունը, խարսխված գիտելիքի հիման վրա սպայի ինքնավստահության ու փորձառության և սերժանտի բանիմացության միաձուլման վրա, կթեթևանա դասակ-վաշտ օղակում սպաների գերծանրաբեռնվածությունը:

Հատկապես կարևորելով ջոկի և ենթաջոկի (արևմտյան տերմինաբանությամբ՝ «կրակային թիմի») հրամանատար-սերժանտի դերը, նրանից ակնկալվում է լինել զինվորի աչքերին տառացիորեն նայելով վերջինիս անմիջական հրաման տվող առաջին օղակի հրամանատար, ով պետք է ունենա ղեկավարի, զինվորական գործի գիտակի, ենթակաների դաստիարակի, ինչպես նաև ցանկացած իրադրությունում վերադաս սպայի մտահղացման շրջանակում կողմնորոշվելու ու կարգապահ նախաձեռնությամբ զինվորներին առաջնորդողի ունակություններ: Նման որակներով կրտսեր հրամանատարը մեծ ներդրում կկատարի Զինված ուժերի կարգապահության, պատրաստության ոլորտներում, բայց ամենակարևորը՝ մարտում՝ հրամանատարությանը թույլ տալով պլանավորել ու կատարել ապակենտրոնացված խնդիրներ ընդհուպ մինչև ջոկ-ենթաջոկ օղակի փոքր ստորաբաժանումներով:

Զինված ուժերում արհեստավարժ սերժանտական կազմի ներդրումը կիրականացվի այնպիսի մոտեցմամբ, որը կմերժի սերժանտական կազմի հանդեպ առկա ընդհանուր մոտեցումը, ըստ որի՝ սերժանտը առաջին հերթին դիտարկվում է որպես կարգապահության ամրապնդման միջոց: Արհեստավարժ սերժանտակական համակարգի ներդրման հիմքում կդրվեն հետևյալ չորս առաջնահերթությունները. (ա) մարտունակության բարձրացում՝ փոքր

ստորաբաժանումներով մարտ վարելու ունակության տեսանկյունից, (բ) ՋՈՒ պատրաստության մակարդակի բարձրացում, (գ) ՋՈՒ բոլոր օղակներում ինստիտուցիոնալ երկարակեցության և խորագիտակության ապահովում, (դ) կարգապահության ամրապնդում:

Նախատեսվում է սահմանել արհեստավարժ սերժանտների ծառայողական առաջխաղացման պաշտոնուղիներ (կազմեր)՝ հրամանատարական և շտաբային (նմանակելով հրամանատարական ու շտաբային պաշտոնների միջև հերթագայելու սպայական փորձը):

IX. Զինված ուժերի կազմակերպական և հաստիքային կառուցվածքի բարելավում

Զինված ուժերի հաստիքային կառուցվածքի բարելավումն ուղիղ համեմատական է զինված ուժերի առջև դրված խնդիրների արդյունավետ իրականացմանը, ինչը պետք է բացառի հաստիքային նախատեսման, պլանավորման և կիրարկման գործընթացներում ցանկացած ոչ նպատակային գործողություն: Հաստիքային կառուցվածքի արդյունավետության հիմնական հատկանիշներն են տվյալ ստորաբաժանման խնդիրների կատարման համար անհրաժեշտ հաստիքային կազմի առկայությունը, ոչ նպատակային հաստիքների կրճատումը, հաստիքների թվաքանակի ուռճացման բացառումը, ինչպես նաև զինվորական և քաղաքացիական գործառույթների հստակ տարանջատումը:

Որպես հաստիքային և կազմակերպական տարրերի բարելավում է դիտարկվում նաև մասնագիտական հիերարխիկ բուրգի կառուցումը, համապատասխանաբար՝ ՊՆ և ՋՈՒ ԳՇ կառուցվածքային ստորաբաժանումների ենթակայությամբ գործող բոլոր ստորաբաժանումների առանձնահատուկ, մասնագիտական գիտելիքներ պահանջող հաստիքների՝ կենտրոնական ապարատի համապատասխան ստորաբաժանման ուղիղ ենթակայության սահմանումը:

Զինված ուժերի կազմկառուցվածքային ընթացիկ և պլանավորվող փոփոխությունները նախատեսում են մարտական խնդիրների կատարման համար անհրաժեշտ ուժերի և միջոցների, մասնագիտացված ստորաբաժանումների ձևավորում, համալրում և պատրաստություն: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվում զորաշարժային, հրթիռահրետանային, ՀՕՊ, ՌԷՊ, ԱԹՍ, հատուկ նշանակության կարողությունների ձևավորմանը:

Զինված ուժերում լավագույն փորձի վերլուծությունը, փոխանակումը, խնդիրների կանխարգելումը կամ դրանց հասցեագրումը օպերատիվ կերպով իրականացնելու նպատակով կձևավորվի Զինված ուժերում Քաղված դասերի վերլուծական կենտրոն, որը կինտեգրվի ստեղծվելիք այն կառուցվածքային

ստորաբաժանման կազմում, որը պատասխանատու կլինի զինված ուժերի պատրաստության և դոկտրինի համար: Այն կապահովի զինված ուժերի շարունակական զարգացումը և կատարելագործումը՝ ներքևից վեր սկզբունքով, խնդիրները/գաղափարները վեր հանելու և լուծումները ողջ Զինված ուժերին առաջարկելու միջոցով:

Կազմակերպական և հաստիքային կառուցվածքի վերանայման, ինչպես նաև կոռուպցիոն ռիսկերի նվազեցման առնացքային բաղադրիչ է պաշտպանության նախարարության և զինված ուժերի գլխավոր շտաբի գործառույթների, ստորաբաժանումների և հաստիքների հստակ տարանջատումը, ըստ մարտական և ոչ մարտական խնդիրների պլանավորման, իրականացման, վերահսկման գործառույթների, այն առանցքային մոտեցմամբ, որ մարտական գործառույթների համար պատասխանատու են ԳՇ ստորաբաժանումները, իսկ ոչ մարտականի համար՝ ՊՆ ստորաբաժանումները: Ընդ որում, ՊՆ-ն պետք է իրականացնի ապրանքանյութական արժեքների ապահովման՝ գնման և պահպանման, կենտրոնացված բեռնափոխադրումների, ինչպես նաև ֆինանսների և այլ վարչատնտեսական կառավարման գործառույթները: Այս փոփոխությունների իրագործման նպատակով արդեն իսկ ձևավորվել է համապատասխան իրավական բազա, և ապագայում շարունակվելու են աշխատանքները վերը նշված տարանջատումը գործնականում և լիարժեք ապահովելու ուղղությամբ:

Փոփոխությունների հաջորդ բաղադրիչն է հիմնականում ոչ մարտական գործառույթների, իսկ առանձին դեպքերում նաև մարտական գործառույթների մասնավորին արտապատվիրակելը, այն առանցքային մոտեցմամբ, որ զինված ուժերի ապահովման կամայական գործառույթ, որը կարող է իրականացվել մասնավորի կողմից, պետք է արտապատվիրակել: Արդեն իսկ իրագործված պարենային ապահովման ծրագրի մոդելով, կարտապատվիրակվեն վառելիքային, պահեստային, կենտրոնացված բեռնափոխադրումների և վարչատնտեսական կառավարման այլ համակարգերը:

X. <u>Վարձատրության համակարգ</u>

Զինված ուժերում վարձատրության գործող համակարգը դեռևս ամբողջությամբ հիմնված չէ միասնական քաղաքականության վրա՝ առանձին դեպքերում հատվածային լուծումները գերակշռում են համակարգային մոտեցումներին: Ուստի ներդրվելու է միասնական քաղաքականության վրա հիմնված վարձատրության համարժեք համակարգ, որի ելակետերն են լինելու՝

- վարձատրության չափը, համակարգի կառուցվածքը և հաստիքները պետք է բխեն Զինված ուժերի և կոնկրետ գործառույթի նպատակից և բնույթից,

- յուրաքանչյուրը պետք է զբաղվի իր կոնկրետ գործառույթներով և յուրաքանչյուրի ծառայության արդյուքները պետք է լինեն չափելի,
- ծառայողները պետք է համարժեք վարձատրվեն:

Այս փոփոխությունների ապահովման նպատակով որդեգրվել են հետևյալ մոտեցումները՝

- Զինված ուժերում գործող հաստիքները տարանջատվում են՝ զինվորական և ոչ զինվորական հաստիքների:

Ոչ զինվորականներն են՝ քաղաքացիական ծառայողները և քաղաքացիական աշխատանք կատարողները: Ոչ զինվորական ծառայողների վարձատրության համակարգը հանդիսանում է Հայաստանի Հանրապետությունում գործող քաղաքացիական ծառայության համակարգի բաղադրիչ և այս մասով Զինված ուժերում փոփոխությունները հնարավորինս իրականացվելու են ընդհանուր քաղաքացիական ծառայության համակարգում իրականացվող փոփոխությունների համատեքստում: Ոչ զինվորական ծառայողների վարձատրության չափի մասով հիմնական մոտեցումը պետք է լինի այն, որ լինելով քաղաքացիական մասնագետներ, այս ծառայողները պետք է ստանան մրցակցային՝ մասնավորի միջինից բարձր աշխատավարձ, որպեսզի հնարավոր լինի երկրում առկա որակյալ աշխատուժը ներգրավել Զինված ուժեր:

- Զինվորական հաստիքները տարանջատվում են ըստ մարտական գործառույթների՝ պլանավորմանը, իրականացմանը և վերահսկմանը անմիջական և ոչ անմիջական մասնակցության:

Այս ծառայողների վարձատրության համակարգի համարժեքությունը պայմանավորվում է զինծառայողի որակավորմամբ և ծառայության ռիսկայնությամբ: Այլ կերպ ասած՝

- որքան մեծ է ծառայության ռիսկայնությունը, այնքան բարձր է վարձատրությունը, ինչպես նաև,
- որքան բարձր է ծառայողի որակավորումը, այնքան բարձր է վարձատրությունը: Ընդ որում, պահանջվող որակավորումը պետք է պարբերաբար վերահաստատվի, իսկ նվազագույն որակավորման պահանջի գերազանցումը՝ պետք է լրացուցիչ խրախուսվի,
- հաշվի է առնվում նաև առողջական խնդիրներ ունենալով հանդերձ ծառայությանն ուժերի ներածին չափով ներդրում կատարելու հարցում անհատական պատրաստակամության և հանձնառության գործոնը: Առկա ռիսկայնության և պահանջվող որակավորման հաշվառմամբ վերստին քննության կենթարկվեն բոլոր զինվորական հաստիքների զբաղեցման պիտանիության համար սահմանված սահմանափակումները՝ առողջական խնդիրներ ունեցող անձանց համար առավելագույն ներառականություն ապահովելու նպատակով:

Ծառայության հետ կապված ռիսկայնությամբ պայմանավորված վճարումները կիրականացվեն «Հավելումների» համակարգի միջոցով՝ ծառայության որոշակի պայմաններում զինծառայողին վճարելով որոշակի չափի հավելում:

Որակավորմամբ պայմանավորված վճարումները կիրականացվեն «Հավելավճարների» համակարգի միջոցով՝ ատեստավորման արդյունքում կամ անհատական որակավորման գերազանցության վճարի միջոցով:

Մարտական խնդիրների իրականացման, պլանավորման կամ վերահսկման գործառույթներ ունեցող պաշտոններ զբաղեցնող պայմանագրային զինվորական ծառայության սպայական, ենթասպայական և շարքային կազմերի զինծառայողների ատեստավորման համակարգն արդեն իսկ ներդրվել է: Ատեստավորման արդյունքներով հաշվարկվում է հավելավճար: Այս գործընթացով համաչափորեն բարձրացվում է պայմանագրային զինվորական բոլոր կազմերի ֆինանսական բավարարման և դրան զուգահեռ նաև՝ զինված ուժերի մարտունակության մակարդակը:

Մարտական գործառույթներին անմիջականորեն չմասնակցողները հիմնականում իրականացնում են մարտական ծառայության հետ կապված մասնագիտական՝ ապահովման, կազմակերպման, սպասարկման, ինչպես նաև վարչական բնույթի այլ գործառույթներ, և ելնելով այս գործառույթների բնույթից ու ծառայության պայմաններից, այդ հաստիքները պետք է լինեն զինվորական:

Հաշվի առնելով, որ մարտականի համեմատ ոչ մարտական գործառույթների իրականացման ժամանակ ռիսկերը նվազ են, իսկ շարային և ֆիզիկական հատկանիշներին ներկայացվող պահանջներն ավելի ցածր, հետևաբար ոչ մարտական գործառույթներ իրականացնող զինծառայողների վարձատրությունն ավելի ցածր կլինի, քան մարտականինը: Սա նաև մոտիվացիա է ոչ մարտական ծառայությունից մարտական ծառայության անցնելու համար:

XI. <u>Տարածքային պաշտպանության համակարգ</u>

Տարածքային պաշտպանությունը ենթադրում է պետության վարչական իրավասության ներքո գտնվող շրջանների համակարգված, միասնական և համաչափ պաշտպանություն: Տարածքային պաշտպանության մտահղացումը նախատեսում է ըստ բնակչության տեղաբաշխվածության պահեստազորայինների ներգրավումը մարտական գործողություններին իրականացնել այնպես, որ մարդկային, նյութական, ժամանակային ռեսուրսները բաշխվեն ամենաօպտիմալ կերպով՝ հանգեցնելով ակնկալվող արդյունքին:

Տարածքային պաշտպանության մեջ ներգրավվող ուժերն ու միջոցները, խնդիրները, տեղն ու դերը Զինված ուժերի համակարգում սահմանված են «Տարածքային պաշտպանության համակարգի հայեցակարգում»:

Հայաստանի Հանրապետության տարածքի ծավալից, մարտահրավերների ուղղություններից ելնելով՝ նախատեսվում է ունենալ տարածքային պաշտպանության այնպիսի համակարգ, որի մի մասը կհանդիսանա, ըստ ստեղծման ուղղությունների, տարածքային մակարդակում պաշտպանության ապահովման սկզբունքով ստեղծված և անմիջական մարտական խնդիր ունեցող մարտական ստորաբաժանումների ամբողջությունը՝ պատերազմական ժամանակների կառուցվածքով, հաստիքներով, կցագրմամբ և զորահավաքային զորակոչի միջոցով համալրմամբ, ունենալով նաև խաղաղ ժամանակի հաստիքներ՝ կազմակերպչական գործընթացի ապահովման համար:

Տարածքային պաշտպանության համակարգում կազմավորվող տեղական պաշտպանության ստորաբաժանումները կհամալրվեն տվյալ համայնքում հաշվառված, պատերազմական ժամանակի հաստիքներին չկցագրված և պահեստազորի երկրորդ խմբում հաշվառված կամ զինվորական հաշվառումից հանված անձանցով՝ կամավորության սկզբունքով: Արդյունավետ է համարվում տեղական պաշտպանության ստորաբաժանումների հետ խաղաղ ժամանակ պատրաստության անցկացումը տարածքային պաշտպանության խնդիրների ապահովման ուղղությամբ: Տարածքային/տեղական պաշտպանության ուժերի պատրաստության ծրագիրը ենթարկվելու է շարունակական հղկման՝ միջազգային առաջավոր փորձի՝ հատկապես վերջին շրջանում տեղի ունեցող պատերազմների փորձառության հաշվառմամբ:

Տարածքային պաշտպանության զարգացմանը կնպաստի նաև ՀՀ տարածքի օպերատիվ սարքավորման աշխատանքների իրականացումը:

Ընդհանուր առմամբ, ի լրումն «Տարածքային պաշտպանության համակարգի հայեցակարգում» սահմանված խնդիրների, ՀՀ համապարփակ պաշտպանության և անվտանգության հայեցակարգի շրջանակներում Տարածքային պաշտպանության ուժերը Զինված ուժերի պատերազմավարման մտահղացման շրջանակներում ներդրում են կատարելու հետևյալ երեք կարևոր առաջադրանքների կատարման գործում.

- պահեստազորային ուժերի զորահավաքային պլանի գործարկում՝ ավելացված մարտական հզորություն ձեռք բերելու համար,
- հակառակորդի առաջխաղացման՝ ցանկալի հունով ուղղորդում և սևեռակում (ֆիքսում)՝ ամրացված շրջանների միջոցով, հակառակորդի հաղորդակցության ուղիների խաթարում՝ կուտակված ուժերին կենտրոնացված հակահարձակման համար խոցելի դարձնելու համար,
- արագաշարժ և «անճարպ» (առանց ավելորդությունների) ապահովումներում պահանջմունքների բավարարում՝ ռեսուրսների կարգապահ սպառման, հասանելի տարածքային ռեսուրսների բանեցման և նյութական մասի կառավարման միջոցով:

XII. Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի մեխանիզմների կատարելագործում

1. Ակտիվ պահեստազորի պատրաստում:

Հայաստանի Հանրապետության սահմանափակ զորահավաքային ռեսուրսները, հատկապես՝ սահմանամերձ շրջաններում ժողովրդագրական բացասական միտումները, բնակչության թվի համեմատ մեծաքանակ զինված ուժեր ունենալու անհրաժեշտությունը պարտադրում են նոր ու առավել արդյունավետ մոտեցումներ որդեգրել զորահավաքային միջոցների համակարգված և արդյունավետ կառավարման մեխանիզմների ներդրման ուղղությամբ:

Ըստ այդմ՝ զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի ուղղությամբ նախատեսվող ծրագրերի նպատակն է վերանայել, բարելավել ու կանոնակարգել զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի իրականացման ընթացքը, ավարտին հասցնել ակտիվ պահեստազորային համակարգի ներդրման գործընթացները:

Միևնույն ժամանակ, զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի ուղղությամբ նախատեսվող ծրագրերը միտված են նոր որակ հաղորդելու պետության պաշտպանության և անվտանգության բնագավառներում իրականացվող բարեփոխումներին, պետական և մասնավոր հատվածի սերտ փոխգործակցության արդյունքում զորահավաքային կարողությունների արդյունավետ կենտրոնացված կառավարմանը, Զինված ուժերի և տնտեսության զորահավաքային ծավալմանը, ինչպես նաև ապահովելու ռազմական դրության ժամանակ պետության բնականոն գործունեությունը:

Զորահավաքային նախապատրաստության և զորահավաքի ուղղությամբ իրականացվող կարևոր լուծումներից է «Զինված ուժերի միասնական կառավարման ավտոմատացված համակարգի» գործարկումը, որն ուղղված է ԶՈՒ ղեկավարման ու կառավարման արդիականացմանը և ժամանակակից ռազմական գործողություններ վարելու համար օպերատիվության, կենսունակության և շարժունակության մակարդակի բարձրացմանը: Համակարգի շնորհիվ հնարավոր կլինի հավաքագրել, վերահսկել և համակարգել համապատասխան գործընթացներն օպերատիվ ղեկավարման ու կառավարման մեկ կամ մի քանի կետերից, ստեղծել համընդհանուր, համապարփակ և անընդհատ ինքնաշխատ եղանակով թարմացվող ու ճշգրիտ տվյալների բազա, որի հիման վրա Զինված ուժերը հնարավորություն կունենան կայացնել արագ և արդյունավետ որոշումներ, ինչպես նաև պլանավորել սցենարներ՝ ըստ մոդելավորման և սցենարների մշակման համակարգի: Զինված ուժերի միասնական ղեկավարման ու կառավարման ավտոմատացված համակարգի ներդրմամբ հնարավորություն կընձեռվի ստեղծել նաև

զորահավաքային տվյալների ամբողջական բազա, որտեղ արտացոլված կլինեն Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում առկա զորահավաքային կարողությունները, դրանց տեղաբաշխումը և անհրաժեշտության դեպքում՝ համալրման ենթակա տարրերը: Բացի այդ, նման համակարգը կբարձրացնի զորահավաքային առաջադրանք ունեցող՝ ՀՀ պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների և մասնավոր հատվածի ընկերությունների միջև փոխգործակցության ու հաշվետվողականության մակարդակը:

Այս ենթատեքստում, առկա ռեսուրսների օպտիմալ ներգրավման նպատակով, իրավական և հայեցակարգային կարգավորումների միջոցով կներդաշնակեցվի փոխգործակցությունը Զինված ուժերի և ռազմամարզական հասարակական կազմակերպությունների միջև, որոնք պետք է գործեն ՀՀ կառավարության վերահսկողության ներքո: Նախքան ընդունվելը, համապատասխան իրավական և հայեցակարգային կարգավորումների նախագծերը կդրվեն համընդգրկուն թափանցիկ քննարկումների՝ ռազմամարզական հասարակական կազմակերպությունների, ոլորտի փոր-ձագետների և քաղաքացիական հասարակության շահագրգիռ այլ շերտերի ներգրավմամբ:

2. Պետական սահմանի պահպանության համակարգի կատարելագործում:

Պետական սահմանի պահպանությունն ու պաշտպանությունը Բանակի ամենակարևոր գործառույթներից մեկն է: Այն չի ներառում միայն որոշակի բնագծերում զինծառայողների մարտական հերթապահությունը, այլև բաղկացած է պետական սահմանի հսկողության և պաշտպանության համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների հագեցվածության ամբողջությունից:

Այս խնդիրների լուծման ու պետական սահմանի՝ անվտանգային մարմինների կողմից միասնական, փոխհամաձայնեցված պաշտպանության նպատակով նախատեսվում է.

- պետական սահմանի պահպանության գործառույթի փուլային հանձնումը ՀՀ ԱԱԾ սահմանապահ զորքերին,
- տեխնիկական միջոցների (ռոբոտների) ներդրմամբ մարտական հերթապահության կազմակերպման օպտիմալացում՝ առաջնագծից ստորաբաժանումների աստիճանաբար դուրսբերմամբ,
- Զինված ուժերի պաշտպանության գոտու, նոր զբաղեցրած բնագծերի ինժեներական սարքավորում և ամրացված շրջանների կառուցում,
- պայթյունային և ոչ պայթյունային արգելափակոցների համակարգի զարգացում,

- Զինված ուժերի կարևորագույն օբյեկտների պատսպարում՝ օդուժի ռադիոլոկացիոն հետախուզությունից և նշանառու հարվածներից պաշտպանվելու համար:

XIII. Ռազմական կրթության և գիտության զարգացում

Ռազմական կրթության համակարգի վերափոխումը և բարձրագույն, հետբուհական և լրացուցիչ կրթության ծրագրերով ինքնաբավ և միջազգայնորեն մրցունակ ազգային ռազմակրթական համակարգի ձևավորումը հիմնական մասնագիտությունների գծով սպայական և ենթասպայական կազմերի պատրաստման ուղղությամբ նվազագույնի պետք է հասցնի կախումն օտարերկրյա ռազմաուսումնական հաստատություններից՝ ձևավորելով ժամանակակից պատերազմների պահանջներից բխող գիտելիքներով հայ զինծառայողի կերպար:

Այդ նպատակով կիրականացվեն դասախոսական ու մեթոդական կազմերի վերապատրաստման, ուսումնանյութական բազայի ընդլայնման և համապատասխան ենթակառուցվածքների ձևավորման գործընթացներ:

Ոչ պակաս կարևոր է ազգային ռազմակրթական համակարգի ինտեգրումն առաջատար կրթական հաստատություններին, որը ոչ միայն հնարավորություն կտա հասու դարձնել ժամանակակից ռազմական գիտության և կրթության վերջին նվաճումները և արտերկրում շարունակական կրթական հնարավորությունները, այլև կընդլայնի ռազմավարական հետազոտությունների, ռազմական գիտության, Զինված ուժերի արդյունավետ ղեկավարման ու կառավարման և այլ բնագավառներում գիտահետազոտական աշխատանքների իրականացման, զինված ուժերի պատրաստության նոր ծրագրեր, մարտական գործողությունների վարման նոր ձևեր ու եղանակներ ներդնելու կարողությունների ձևավորման հնարավորությունները:

Ելնելով արհեստավարժ Բանակի անցման պահանջներից և հաշվի առնելով հիմնական սպայակազմի՝ նախկինում ստացած գիտելիքների և հմտությունների որոշակի անհամապատասխանությունն այդ պահանջներին, կարճաժամկետ հեռանկարում կմշակվեն և կիրականացվեն վերապատրաստման դասընթացներ օպերատիվ արվեստի, արևմտյան և արևելյան ռազմական դպրոցների հիմնական տարբերությունների, առաջնորդության, ռազմական ղեկավարման ու կառավարման և բարեվարքության առարկաների ուղղությամբ:

Միաժամանակ, հանրակրթության ոլորտում կիրականացվի նախնական զինվորական պատրաստության առարկայի մեթոդաբանության ու ծրագրերի վերանայում՝ ավագ դպրոցների աշակերտներին որակյալ զինվորական գիտելիքներ ուսուցանելու և զինվորական ծառայության գրավչությունը բարձրացնելու նպատակով:

Ուսումնանյութական բազայի կատարելագործման շրջանակներում նախատեսվում է ուսումնական զենքով, սպառազինության և ռազմական տեխնիկայի վարժասարքերով հագեցվածության ապահովում (ուսումնական կենտրոններ և զորամասեր), մարտավարական գործողությունների սիմուլյատորային համակարգի ձևավորում, ուսումնական գործընթացի ժամանակ համակարգչային ռազմական խաղերի օգտագործում, հատուկ նշանակության ուժերի մարտական խնդիրների ղեկավարման ու կառավարման ժամանակ ԱԹՍ միջոցների ներգրավում, վիրտուալ միջոցների կիրառում՝ տեղանքի վիրտուալ ուրվագծի ստեղծմամբ (արտացոլմամբ):

Ռազմական կրթության և գիտության ոլորտի բարեփոխումների համատեքստում նախատեսվում է մշակել և գործողության մեջ դնել նաև ռազմակրթական նոր հայեցակարգ, ինչպես նաև ստեղծել գիտակրթական բավարար ներուժ, որը կլրամշակի մարտական կանոնադրությունները, ժամանակակից պատերազմների և մարտական գործողությունների վարմանը վերաբերվող մարտավարական մակարդակի ուղեցույցները, հրահանգները և այլ ղեկավար փաստաթղթերը:

XIV. <u>Զինված ուժերի բարոյահոգեբանական պատրաստության մակարդակի բարձրացում</u>

Զինված ուժերի բարոյահոգեբանական ապահովման առաջնային նպատակներն են անձնակազմի բարոյահոգեբանական վիճակի կայունացումը, զինված ուժերի բարի համբավի ապահովումը, պետական-գաղափարական դաստիարակության խթանման նպատակամետ միջոցառումների իրականացումը, հոգևոր ներուժի վերականգնումը, տեղեկատվական-հոգեբանական ազդեցության նվազեցման և հոգեբանական կորուստների կառավարումը, զինվորական կարգապահության ամրապնդումը, զինծառայողների իրավագիտակցության բարձրացումը և իրավախախտումների արդյունավետ կանխարգելումը, զինծառայողների պետականամետ մտածողության զարգացումը:

Զինված ուժերի կազմավորումից ի վեր նախկին խորհրդային չափորոշիչների որդեգրումը խոչընդոտել է ոչ միայն ազգային ռազմական մշակույթի ձևավորմանը, այլև ձևավորել է այնպիսի ռազմական ավանդույթներ և հոգեբանություն, որոնք անհատական բարոյահոգեբանական պատրաստության առումով չեն համապատասխանում ժամանակակից զինծառայողի կերպարին, իսկ ստորաբաժանումների կազմով պատրաստության առումով ընդհանրապես բացակայում են: Դրանցից է ժամանակակից մարտի պայմաններում տարբեր բարդությունների մարտական խնդիրների ինքնուրույն

կատարման ունակությունը, այդ թվում՝ գլխավոր ուժերից անջատ, առաքելության գիտակցմամբ, նախաձեռնողականության ցուցաբերմամբ և այլն:

Զինված ուժերի բարոյահոգեբանական ապահովման տեսանկյունից խիստ կարևոր է ձևավորել այնպիսի արժեքային համակարգ, որը ոչ միայն կբարձրացնի զինծառայողի մարտական ոգին մարտական գործողությունների ժամանակ, այլև կդառնա կենսակերպ առօրյա ծառայության մեջ: Այդպիսի արժեքային ուղենիշներ են հանդիսանում.

- **<u>Հավատարմությունը</u>**

Հավատարմությունը զինվորական երդմանը, ստորաբաժանմանն ու ծառայակիցներին: Հավատարիմ լինել՝ նշանակում է հավատալ ու նվիրվել ինչ որ մեկին կամ ինչ որ բանի: Հավատարմությունը առաջացնում է վստահություն անձի նկատմամբ և մղում ավելի բարձր ու կարևոր առաքելությունների:

- **<u>Պարտքի զգացումը</u>**

Կատարել պարտավորությունները լիարժեք, բարեխղճորեն, պատասխանատվությամբ ու արիաբար, լինել հանձնառու, նախաձեռնող ու ստեղծագործող: Ընդհանուրի ծառայության հաջողությունը հիմնված է յուրաքանչյուրի պարտականությունների լիարժեք կատարման վրա:

- **<u>Անձնվիրությունը</u>**

Առաջնային համարել պետության, ազգի, բանակի ու ենթակաների բարօրությունը՝ սեփական անձի բարօրությունից: Անձնվեր ծառայության հիմքը թիմի յուրաքանչյուր անդամի հանձնառությունն է՝ առաջ գնալ, ինքնակատարելագործվել, ջանքերն ավելացնել, բարձրացնել ծառայության որակը՝ հանուն ընդհանուրի:

- **<u>Պատիվը</u>**

Պատվի են արժանանում կամ պատվո պարգևներ են ստանում այն զինծառայողները, ովքեր պատիվը դարձնում են առօրյա կյանքի խնդիր, զարգացնում են արժանապատիվ ապրելու սովորույթը և ամրացնում այն իրենց կատարած յուրաքանչյուր որոշումով:

- **<u>Ազնվությունը</u>**

Ազնվությունը որակ է, որը զարգացնում են՝ բարոյական սկզբունքներին հավատարիմ մնալով: Այն պահանջում է լինել ճշմարտախոս և մեծացնում է անձի նկատմամբ վստահությունը:

- **<u>Քաջությունը</u>**

Հաղթահարել վախը, վտանգներն ու դժվարությունները՝ թե՛ ֆիզիկական, թե՛ բարոյական: Քաջությունը ֆիզիկական ու հոգեբանական ճնշումներին դիմանալու և անհրաժեշտության դեպքում կյանքը վտանգի տակ դնելու կարողություն է: Այն մարտական խնդրի կատարումը շարունակելու և իր օրինակով մյուսներին ոգեշնչելու ընդունակություն է:

Մարտական գործողությունների ընթացքում բարոյահոգեբանական ապահովման առումով ոչ պակաս կարևոր չափորոշիչներ են հանդիսանում վստահությունն իր առաքելության ճշմարտացիության, սեփական պատրաստվածության, սեփական զենքի առավելության, արտաքին տեսքի՝ հանդերձանքի, ինչպես նաև վիրավորվելու դեպքում անհապաղ բժշկական օգնության և դրանով իսկ կյանքը չկորցնելու նկատմամբ:

Զինված ուժերում բարոյահոգեբանական վիճակի բարելավման տեսանկյունից խիստ կարևորվում է զինվորական հոգեբանների ինստիտուտի կատարելագործումն ու զարգացումը, ինչպես նաև ԶՈՒ-ում գործող հոգեբանական օգնության կետերի ու հոգեբանական հաղթահարման արգելագոտիների տեխնիկական հագեցվածության ապահովումն ու հոգեբանական հետազոտման և ախտորոշման ավտոմատացված նորագույն տեխնիկական լուծումների և համակարգերի ներդրումը: Զուգահեռաբար, Զինված ուժերում տեղեկատվական, մշակութային և ժամանցային միջոցառումների կազմակերպումը պետք է կրի խիստ բովանդակային և անհրաժեշտ բնույթ:

Զինծառայողի բարոյահոգեբանական պատրաստության բարձր մակարդակի ապահովումն ուղղակիորեն փոխկապակցված է հասարակության բարոյահոգեբանական վիճակի և արժեքային համակարգի հետ, որը համապարփակ մոտեցում է պահանջում: Այն ենթադրում է համապետական ծրագրերի մշակում և իրականացում՝ սկսած առողջ ապրելակերպից, մինչև հանրային կրթություն, ընտանեկան առողջություն, հասարակական օրինապաշտություն և այլն:

XV. <u>Զինծառայողների և նրանց ընտանիքների սոցիալական պաշտպանության, զինվորական ծառայության գրավչության բարձրացում</u>

3) Զինծառայողների նյութական և սոցիալական ապահովման երաշխիքներ

Զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական, ֆինանսական, առողջապահական, բնակարանային ապահովության երաշխիքների սահմանումը խիստ կարևոր է արհեստավարժ բանակի անցման համատեքստում: Այդ քաղաքականության

շահառու շրջանակներն են՝ զինծառայողները, հաշմանդամության զինվորական կենսաթոշակի իրավունք ունեցող նախկին զինծառայողները, զինծառայողների, զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքների անդամները:

Սոցիալական պաշտպանության երաշխիքները բազմաթիվ են՝ դրամական ապահովություն, ծառայության նոր վայր տեղափոխվելու դեպքում դրամական օգնություն, ՀՀ տարածքում արձակուրդի անցկացման վայր մեկնելու և արձակուրդի վայրից վերադառնալու տրանսպորտային ծախսերի փոխհատուցում, ծառայությունից արձակման դրամական օգնություն, բժշկական սպասարկում և օգնություն, հանգստի ապահովում, պարենային և իրային ապահովություն, սոցիալական փաթեթի ծառայություններ, բնակարանային ապահովության ծրագրեր և այլն: Այդ երաշխիքների նպատակը զինծառայողների բարեկեցության, արժանապատիվ կյանքի ապահովումն է, քանի որ զինվորական ծառայությունը բարդ, ռիսկայնություն ենթադրող, միևնույն ժամանակ արժանիքահեն առաքելություն է, որը կրելու իրավասություն ունեն հասարակության ամենախիզախ, կոմպետենտ, հայրենասեր և բարձր որակական հատկանիշներ ունեցող անձինք:

Արհեստավարժ բանակի անցման, զինվորական ծառայության գրավչության բարձրացման և զինծառայողների սոցիալական ապահովության ոլորտում հարկ է առանձնացնել ատեստավորման համակարգի ներդնումը: Ատեստավորման միջոցով համաչափորեն բարձրացվում է պայմանագրային զինվորական բոլոր կազմերի ֆինանսական բավարարման և դրան զուգահեռ նաև՝ զինված ուժերի մարտունակության մակարդակը:

Ընդհանուր առմամբ, այս ոլորտի բոլոր բարեփոխումների հիմքում դրված է առավելագույնի սկզբունքը, համաձայն որի՝ պետությունը հասանելի ռեսուրսներով իրականացնելու է առավելագույնը՝ զինծառայողների, նրանց ընտանիքի անդամների սոցիալական, ֆինանսական, առողջապահական, բնակարանային ապահովության երաշխիքների, նրանց բարեկեցության և հեղինակության բարձրացման ուղղությամբ: Այս սկզբունքի պաշտպանության ներքո է գտնվում նաև զինծառայողների, այդ թվում՝ զոհված (մահացած), ընտանիքի անդամների սոցիալական, առողջապահական երաշխիքների համակարգը:

4) Զինծառայության գրավչության և զինծառայողի հեղինակության բարձրացման մեխանիզմներ

Հասարակության մեջ բանակի վարկի և հեղինակության բարձրացմանն ուղղված տեղեկատվական քաղաքականության նպատակն է բանակը՝ որպես Հայաստանի Հանրապետության պաշտպանության, անվտանգության, տարածքային ամբողջականության և սահմանների անձեռնմխելիության ապահովման կարևորագույն ինստիտուտ, մարդկանց գիտակցության մեջ արմատավորելը: Բանակի առանձին ձեռքբերումներով պարծենալու փոխարեն՝ այդ քաղաքականությունն իր հիմքում պետք է ունենա զինվորական ծառայության իրական պատկերի ազնիվ ներկայացումը՝ իր համակ վեհանձնությամբ, բայց և պետության մակարդակով՝ տնտեսական ու ժողովրդագրական բեռով, անհատի մակարդակով՝ դժվարություններով, զրկանքներով ու վտանգներով հանդերձ: Պետք է ամրապնդվի այն գիտակցումը, որ արդյունավետ Բանակ ունենալը դժվարին, բայց և ոչ սակարկելի խնդիր է: Զինծառայության նկատմամբ հասարակական ընկալման տեսանկյունից վերջնանպատակն այն է, որ զինծառայողը դիտարկվի որպես պետականության կայուն հիմք հանդիսացող հասարակության առանձին դաս: Զինծառայողին հասարակության մյուս անդամներից իր առաքելության իմաստով տարբերակելը ոչ թե խտրական վերաբերմունք է մյուսների նկատմամբ, այլ ընդհակառակը՝ արտացոլում է տվյալ հասարակության ընկալումներն իր և իր պետության պաշտպանի, անվտանգության երաշխավորի վերաբերյալ: Սպան՝ որպես հասարակության առանձին դասի կերպարի կրող ու խորհրդանիշ, պետք է լինի օրինակելի ծառայակիցների միջավայրում և հասարակության մեջ՝ Բանակի հեղինակության և զինվորական ծառայության գրավչության բարձրացման հարցում: Այդ առումով կմշակվեն և կներդրվեն «Հայ զինվորականի բարոյական վարքականոնը (կոդեքս)» և «Հայ զինվորականի արտաքին տեսքի, կեցվածքի և վարվելակերպի վարքականոնը (կոդեքս)», որոնք կսահմանեն զինծառայողին վայել իմիջը (կերպար, վարքագիծ, կենսակերպ), ինչը կարևոր պայման կհանդիսանա Զինված ուժերի հեղինակության բարձրացման և հասարակության մոտ զինվորական ծառայության հանդեպ գրավչության ու հարգանքի ձևավորման հարցերում:

Զինվորական ծառայության գրավչության բարձրացման տեսանկյունից կարևորվում են նաև զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների սոցիալական ապահովման մեխանիզմների արդյունավետության բարձրացումը, զինվորական կենսաթոշակների հետ կապված օրենսդրական դաշտի հստակեցումը, զինծառայողների բնակարանային ապահովման ոլորտի կատարելագործումը, զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների համար նախատեսված արտոնությունների վերանայումը և ընդլայնումը, զինծառայողների և զինվորական ծառայությունից արձակված

քաղաքացիների, զինվորական հաշմանդամների, զոհված (մահացած), անհայտ կորած զինծառայողների և նրանց ընտանիքի անդամների մասնագիտական կողմնորոշման, վերապատրաստման, զբաղվածության ապահովմանն ուղղված կառուցակարգերի ներդրումը, զորքերի մշտական տեղակայման վայրերի, շենքային, կենցաղային և նյութատեխնիկական պայմանների բարելավումն ու զինծառայության անցնելու սոցիալ-տնտեսական շահադրդրման մեխանիզմների զարգացումը:

Զինվորական ծառայության և զինծառայողի կերպարի վերաբերյալ ընկալումներն ու վերաբերմունքը փոխելու քաղաքականությունը, բացի սոցիալականից, նպատակաուղղված է նաև զինծառայողի հոգեբանական, անձնական աճի և կատարելագործման, ինչպես նաև արտաքին տեսքի բարելավման թիրախներին, որոնք պետք է ձևավորեն բարձր մարտունակություն ապահովող բարոյահոգեբանական պատրաստություն, ռազմական կրթության և ծառայողական առաջխաղացման, ներառյալ՝ ծառայության գնահատման արդարացի, փոխկապակցված և թափանցիկ ընթացակարգեր, ինչպես նաև իր առաքելությանը հարիր արտաքին տեսքի ապահովում՝ ինչպես անձնական կեցվածքի, այնպես էլ համազգեստի և հանդերձանքի առումով:

XVI. <u>Առողջ և հավասարակշիռ ռազմաքաղաքացիական հարաբերությունների ձևավորում, մարդու իրավունքների պաշտպանության կատարելագործում</u>

Ռազմաքաղաքացիական հարաբերությունները հավասարարժեք երեք նպատակի՝ Բանակի ռազմական արդյունավետության ավելացմանը, պաշտպանության ոլորտի օգտակար գործողության գործակցի (ՕԳԳ) բարձրացմանը և Զինված ուժերի նկատմամբ վերահսկողության ապահովմանը միտված երևույթ է, որտեղ արդյունքներին հասնում են զինվորականության, ռազմական ոլորտի քաղաքացիական անձնակազմի, իշխանության գործադիր և օրենսդիր ճյուղերի, ինչպես նաև լայն քաղաքացիական հասարակության հետ առողջ և հավասարակշիռ հարաբերությունների ձևավորմամբ: Բոլոր երեք նպատակներին հասնելու համար կարևորվում է պաշտպանության ոլորտի քաղաքացիական ծառայողների բանիմացության և արհեստավարժության ապահովումը՝ վարձատրության, կրթության և ծառայողական առաջխաղացման պատշաճ պայմանների ստեղծման միջոցով:

5) Ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողությունը

Զինված ուժերի ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողությունը բանակ-հասարակություն փոխվստահության ամրապնդման կարևոր գործոն է և կոչված է ապահովելու օրինականության, համաչափության, թափանցիկության, հաշվետվողականության և այլ ժողովրդավարական սկզբունքների անխափան

կիրառումը: Այն հատկապես կարևոր է մի կողմից զինված ուժերի՝ փակ կառույց լինելու, մյուս կողմից արհեստավարժ Բանակի անցման համատեքստում, երբ հստակեցվում և պրոֆեսիոնալ հիմքերի վրա են դրվում զինված ուժերի անձնակազմի իրավունքներն ու պարտականությունները:

Զինված ուժերի ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության տեսանկյունից կարևոր է ինչպես պաշտպանության համակարգի ներսում՝ պաշտպանության նախարարի՝ որպես կառավարության անդամի կողմից քաղաքական վերահսկման, ռեսուրսների պլանավորման և կառավարման ոլորտում ՊՆ քաղաքացիական ստորաբաժանումների լիազորությունների հստակեցումը և պաշտպանության ոլորտում քաղաքացիական ծառայության ընդլայնումը, այնպես էլ պաշտպանության համակարգից դուրս՝ օրենսդիր և գործադիր իշխանության տարբեր կառույցների, Մարդու իրավունքների պաշտպանի և այլ մարմինների օրենքով սահմանված վերահսկողական գործառույթների լիարժեք կատարումը:

Զուգահեռաբար, ժողովրդավարական և քաղաքացիական վերահսկողության մեջ ակտիվ դերակատարում ունեն քաղաքացիական հասարակության գրեթե բոլոր շերտերը՝ զանգվածային լրատվության միջոցները, հասարակական կազմակերպությունները, ազգային և միջազգային իրավապաշտպան կազմակերպությունները, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները, առանձին իրավապաշտպանները, հետաքննող լրագրողները, վերլուծաբանները և այլն:

Քաղաքացիական վերահսկողության մեխանիզմները գործարկվում են հանրային հեռուստատեսության, սոցիալական ցանցերում գործող պաշտոնական էջերի, պաշտոնական կայքի, պաշտոնատար անձանց հարցազրույցների, գրավոր հարցումներին պատասխանելու միջոցով՝ գործունեության և խնդրահարույց, հանրային հնչեղություն ունեցող հարցերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրմամբ:

Զինված ուժերի գործունեության պատշաճ թափանցիկությունն ապահովելու և քաղաքացիական վերահսկողության արդյունավետ իրականացման առումով կարևոր է նաև հանրային և փակ տեղեկատվության հստակ տարանջատումը և տեղեկատվության հասանելիության հնարավորինս ընդլայնումը, ինչպես նաև տեղեկատվության հասանելություն ունեցող կազմակերպությունների և անձանց՝ դրա հետ վարվելու բավարար գիտելիքների ապահովումը: Այդ նպատակով կշարունակվեն իրականացվել մի շարք բարեփոխումներ և կընդլայնվեն քաղհասարակության ներկայացուցիչների կողմից Զինված ուժերի հետ շփվելու, հաղորդակցվելու, տեղեկատվություն ստանալու, գործունեությանը ծանոթանալու նպատակով կազմակերպվող դասընթացները:

6) Զինված ուժերում մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանությունը

Զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության առանձնահատկությունները պայմանավորված են մի կողմից ի սկզբանե օրենքով սահմանված կարգով այդ իրավունքների սահմանափակ բնույթով, մյուս կողմից իրավահարաբերությունների կողմերում իրավասությունների տարբեր ծավալներ ունեցող սուբյեկտներ առկայությամբ: Առանձին ուշադրության են արժանի պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցնող անձնակազմի, ինչպես նաև կանանց իրավունքների պաշտպանության հարցերը:

Հաշվի առնելով վերոնշյալ առանձնահատկությունները, Զինված ուժերում մարդու իրավունքների ու հիմնարար ազատությունների ապահովման նպատակով կիրականացվեն իրազեկվածության բարձրացման, բողոքարկման և բողոք ներկայացնող անձանց հետապնդումներից պաշտպանության, ազադարարման համակարգի միջոցով զինծառայողների կողմից պատասխանատու մարմիններին տեղեկացման հնարավորության, ծառայողական քննությունների գործընթացի պարզեցման, ինչպես նաև պարտադիր ժամկետային զինծառայողների իրավունքների պաշտպանության լրացուցիչ ընթացակարգեր, հետազոտություններ, կրթական ծրագրեր, կներդրվեն գործիքներ, որոնք արտացոլված են Եվրոպայի խորհրդի 2023-2025թթ. գործողությունների ծրագրով, ՀՀ մարդու իրավունքների պաշտպանության ազգային ռազմավարության 2023-2025 թվականների գործողությունների ծրագրով, ՄԱԿ-ի 1325 բանաձևի դրույթների իրականացման 2022-2024 թվականների գործողությունների ծրագրով և այլն:

XVII. <u>Զինված ուժերի կարգապահության մակարդակի բարելավում</u>

Անցումը արհեստավարժ բանակի կոչված է նաև արմատապես փոխել կարգապահության մակարդակը Զինված ուժերում: Ներկայումս Զինված ուժերը բախվում են արմատացած մի շարք կարգապահական խնդիրների, որոնք պայմանավորված են պատմական, աշխարհայեցողական, սոցիալ-հոգեբանական, կոռուպցիոն գործոններով: Պատմական գործոնն արտահայտվում է պատմականորեն պետական ինստիտուտների նկատմամբ անվստահության, ժխտողականության և այլ բացասական դրսևորումներով, աշխարհայեցողականը՝ ոչ ազատ հասարակարգերին ներհատուկ խնդիրներով, որոնցից են վերադաս-ստորադաս ուժային մեծ հեռավորությունը, ինքնուրույն որոշումների կայացումից և պատասխանատվությունից խուսափելը, կնոջ դերի թերագնահատումը և

այլն, սոցիալական գործոնը՝ ցածր իրավագիտակցության մակարդակով, իսկ կոռուպցիոն գործոնը՝ դեռևս խորհրդային բանակից ժառանգած արատավոր բարքերով:

Վերոնշյալ գործոնների հաշվառմամբ Բանակում կարգապահության մակարդակի արմատական փոփոխության համար կներդրվեն համալիր թիրախային ծրագրեր՝ հիմնականում կենտրոնանալով դևիանտ (շեղվող) վարքագիծ ունեցող զինծառայողների վրա: Նախատեսվող ծրագրերի հիմնական թիրախները հետևյալ ուղղություններն են՝

- թմրամիջոցների ապօրինի շրջանառության կանխում, հակազդում,
- զինվորական ծառայությունից բխող հանցավոր արարքների կանխում, հակազդում,
- կոռուպցիոն բնույթի հանցագործությունների կանխում, հակազդում,
- բոլոր տեսակի կարգապահական իրավախախտումների կանխում, հակազդում,
- զինծառայողների իրավագիտակցության մակարդակի բարձրացում,
- զինծառայողների շրջանում պետական, ազգային և համամարդկային արժեհամակարգի ձևավորում:

Թիրախային ծրագրերը պետք է ուղղվեն նաև զինծառայողների միջև ոչ կանոնադրային հարաբերությունների վերացմանը: Չնայած զինծառայողների փոխհարաբերությունները կանոնակարգող նորմատիվ իրավական ակտերում սահմանված են բոլոր խմբերի զինծառայողների իրավունքներն ու պարտականությունները, նրանց հիերարխիկ և կորդինացիոն հարաբերությունների սահմաններն ու ծավալը, սակայն ոչ կանոնադրային հարաբերությունների առկայությունը նույնպես պայմանավորված է մի շարք գործոններով, մասնավորապես՝ հասարակության մեջ քրեական ենթամշակույթի տարրերով, կրթական ցածր մակարդակով, զինվորական ծառայության՝ որպես առաքելության ընկալման բացակայությամբ, բարեկամական-ընկերային կապերի օգտագործմամբ և այլն:

XVIII. <u>Հայեցակարգի՝ հրապարակման ոչ ենթակա բաղադրիչների տեսլականը</u>

Սույն Հայեցակարգը չի անդրադառնում արհետավարժ Բանակի անցման և զարգացման մի շարք կարևոր ռազմական-ռազմավարական բաղադրիչների, որոնք հրապարակման ենթակա չեն: Ուստի դրանց մշակումն ու հաստատումը կիրականացվի առանձին փակ փաստաթղթով, որը բովանդակային առումով կհանդիսանա սույն Հայեցակարգի անբաժանելի մասը: Վերոնշյալ բաղադրիչներն ուղղված են լինելու հետևյալ հիմնական 4 ընդհանրական թիրախներին.

– Զինված ուժերի ղեկավարման և կառավարման համակարգի արդյունավետության բարձրացում, որը ենթադրում է (ա) առանձին հրամանատարությունների ձևավորում, (բ) հրամանատարական և շտաբային գործառույթների հավասարակշռում, որը կհանգեցնի պլանավորման և գործողությունների համար պատասխանատուների լիազորությունների հստակեցման, (գ) «Հրամանատարում առաջադրանքի միջոցով» սկզբունքի ներդրում, որը կապահովի զորքերի միասնական, սակայն ապակենտրոնացված ղեկավարումն ու կառավարումը՝ հնարավոր դարձնելով հասնել զորքերի կիրառման առավելագույն ճկունության և արագաշարժության, (դ) կառավարման կետերի կենսունակության և շարժունակության բարձրացում, (ե) ավտոմատ ղեկավարման ու կառավարման համակարգերի ներդրում, որը համալիր գործողությունների արդյունքում կհանգեցնի հավանական հակառակորդների նկատմամբ որոշումների կայացման գերազանցության:

– պատերազմավարման ձևերի ու եղանակների, օպերատիվ արվեստի վերանայում և ռազմական պլանավորման նոր սկզբունքների որդեգրում, որը ենթադրում է (ա) Հայաստանի Հանրապետության տարածքին, ռեսուրսներին և բնակլիմայական պայմաններին համապատասխանող ժամանակակից տեխնոլոգիաների, օպերատիվ արվեստի և մարտավարության պայմաններին համապատասխան օպերացիաների մշակում, խաղարկում և ներդրում, որոնք հնարավորություն կտան իրականացնել ապակենտրոնացված գործողություններ միասնական մտահղացման ներքո, կապահովեն գերազանցող մոբիլություն, շարժունակություն և հեռահարություն հավանական հակառակորդների նկատմամբ, (բ) ռազմավարական պլանավորման կարողությունների ավելացում, անցում երկարաժամկետ պլանավորման, (գ) քանակական ցուցանիշների հիման վրա պլանավորումից անցում որակական ցուցանիշների հիման վրա պլանավորման, (դ) տեղեկատվական և հոգեբանական օպերացիաների մշակում, (ե) օպերատիվ արվեստի վերանայման համար անհրաժեշտ գիտակրթական ներուժի ձևավորում, (զ) Քաղված դասերի կենտրոնի ստեղծում, որի հիմնական նպատակը կլինի Բանակը դարձնել մշտապես կատարելագործվող և թարմացվող կառույց՝ պատերազմավարման վերջին փորձի և արդյունքների հիման վրա,

– մարտական պատրաստության և պատրաստականության վերանայում, որը պետք է ուղղված լինի անհատապես և ստորաբաժանումների կազմով զորքերի (ուժերի) մարտական վարպետության բարձրացմանը, կստեղծվեն համապատասխան ուսումնական կենտրոններ և ուսումնանյութական բազա, կմշակվեն առանձին զորատեսակների համար մասնագիտական վարժանքներ և զորավարժություններ, կներդրվի հրահանգիչների համակարգ, կձևավորվեն մարտական գործողությունների նմանակման, մոդելավորման ու խաղարկման արդիական կարողություններ, կվերանայվի

զորքերի մարտական պատրաստության և պատրաստականության ստուգման համակարգը:

– սպառազինության և ռազմական տեխնիկայի վերանայում, որը նախատեսում է Զինված ուժերի համալրումը ժամանակակից սպառազինությամբ և ռազմական տեխնիկայով, որոնք կհամապատասխանեն վերոնշյալ սկզբունքներով Բանակի խնդիրների լիարժեք կատարմանը, կապահովեն բոլոր տեսակի ռազմական թիրախների ժամանակին բացահայտում և գերազանցող հեռավորության վրա խոցում, օդային և ցամաքային հուսալի պաշտպանություն, բարձր ճշգրտություն և հեռահարություն, ինչպես նաև մեծ մոբիլություն և անցողականություն:

Այս առումով առանցքային է ռազմատեխնիկական միջազգային համագործակցության դիվերսիֆիկացիայի և տեղական ռազմարդյունաբերության արտադրանքի տեսակարար կշռի հնարավորինս ավելացման քաղաքականությունը: Հայաստանի բարեկամ բոլոր երկրների հետ փոխադարձ և շահավետ համագործակցությունն ուղղված չէ որևէ երրորդ երկրի դեմ, կամ չի իրականացվում դրա հաշվին: Հայաստանին մարտունակ և ժամանակակից տեխնիկայով ու սպառազինությամբ համալրված Զինված ուժերն անհրաժեշտ են ՀՀ անվտանգությունը, տարածքային ամբողջականությունը, սահմանների անձեռնմխելիությունը և որդեգրած խաղաղության օրակարգը պաշտպանելու համար՝ մեկ կենտրոնին ապավինելու անզուգաչափ (ասիմետրիկ) և հիերարխիկ փոխհարաբերությունները փոխարինելով բազմաթիվ կենտրոնների հետ զուգաչափ և ոչ հիերարխիկ փոխհարաբերություններով:

Ռազմատեխնիկական միջազգային համագործակցության նախընտրելի ձևաչափը պետություն-պետություն մոտեցումն է, որը հիմնված է միասնական պատուհանի սկզբունքի վրա՝ հնարավորինս բացառելով առևտրային միջոնորդների ներգրավումը:

XIX. <u>Եզրափակիչ դրույթներ</u>

1. Հայեցակարգի իրականացումը նախատեսում է պաշտպանության ոլորտում Հայաստանի Հանրապետության գործընկերների կողմից ստանալ փորձագիտական, խորհրդատվական և նյութատեխնիկական աջակցություն, որոնց ուղղությամբ կքննարկվեն, կհամաձայնեցվեն և կիրականացվեն երկկողմ և բազմակողմ ոլորտային ծրագրեր ինչպես Հայաստանի Հանրապետության տարածքում, այլնպես էլ արտերկրում:

2. Հայեցակարգի դրույթների իրականացումն ապահովելու նպատակով մշակվելիք գործողությունների ծրագրով (այսուհետ՝ Ծրագիր) նախատեսված համապատասխան կատարողները եռամսյա պարբերականությամբ Անվտանգության խորհրդի գրասենյակին են տրամադրում Ծրագրով սահմանված միջոցառումների կատարման ընթացքի և արդյունքների վերաբերյալ տեղեկատվություն՝ ամփոփելու և Հայաստանի

Հանրապետության վարչապետին ու Անվտանգության խորհրդի անդամներին ներկայացնելու նպատակով:

3. Ծրագրով նախատեսված իրավական ակտերում կատարվող փոփոխությունները, որպես կանոն, պետք է ներառեն Հայեցակարգում ամրագրված միջոցառումների լուծմանն ուղղված կատարողականի արդյունքային ցուցանիշներ:

4. Ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից հատկացման հնարավորության հարցերը կդիտարկվեն տվյալ տարվա բյուջետային գործընթացի շրջանակներում: